

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2012թ. հուլիսի 19 –ին կայանալիք հերթական  
ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ԼՂՀ ընտրական օրենսգրքի (ԸՕ) հոդվածը	Կատարման ժամկետը	Պատասխանատուն	Ծանոթություն
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Դիտորդները հավատարմագրվում են. <b>Հանրապետության Նախագահի ընտրություն նշանակելուց հետո, բայց ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 10 օր առաջ՝ տեղական դիտորդների համար և մինչև քվեարկության նախորդ օրը՝ միջազգային դիտորդների համար</b>	ԸՕ հոդվ. 30, մաս 2, ԿԸՀ 27.09.06թ. թիվ 19/56 որոշում	մինչև 2012թ. հուլիսի 9-ը մինչև 2012թ. հուլիսի 18-ը	ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով	
2.	Լրագրողները հավատարմագրվում են. <b>Հանրապետության Նախագահի ընտրություն նշանակելուց հետո, բայց ոչ ուշ, քան մինչև քվեարկության նախորդ օրը</b>	ԸՕ հոդվ. 31 մաս 1, ԿԸՀ 27.09.06թ. թիվ 19/55 որոշում	մինչև 2012թ. հուլիսի 18-ը	ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով	
3.	Քվեարկության օրվա, տեղի և ժամանակի մասին ընտրողները ծանուցվում են. <b>Հանրապետության Նախագահի ընտրություն նշանակելուց հետո, բայց ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 3 օր առաջ</b>	ԸՕ հոդվ. 13, մաս 8	մինչև 2012թ. հուլիսի 16-ը	ԼՂՀ ոստիկանության անձնագրային և վիզաների բաժին (լիազոր մարմին) կամ նրա համապատասխան տարածքային ստորաբաժանում	
4.	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում թեկնածուներին, կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) եթերաժամ տրամադրող հեռուստառադիոընկերությունները (անկախ սեփականության ձևից) վճարովի եթերաժամի յուրաքանչյուր բուլետի գինը սահմանում են. <b>ընտրություն նշանակելու օրվանից ոչ ուշ, քան 10 օր հետո</b>	ԸՕ հոդվ. 21, մասեր 5, 6	մինչև 2012 թ. ապրիլի 8 -ը	Հեռուստառադիո-ընկերություններ	
5.	Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ստեղծում <b>ընտրություն նշանակելու օրվանից</b>	ԸՕ հոդվ. 27	2012թ. մարտի 29	ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով	

6.	<p>Կուսակցության մշտապես գործող մարմնի որոշումը          Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրելու մասին և          լիազոր ներկայացուցչի տվյալները ԿԸՀ ներկայացվում են.  <b>ընտրության օրվանից ոչ շուտ, քան 90 և ոչ ուշ, քան 75 օր առաջ, մինչև          ժամը 18.00-ն</b></p>	<p>ԸՕ հոդվ. 68,          մաս 9,          ԸՕ հոդվ. 71,          մաս 5,          ԸՕ հոդվ.88,          մաս 1</p>	<p>2012թ ապրիլի 20-          ից մինչև 2012թ.          մայիսի 5-ը`          ժամը 18.00</p>	<p>Կուսակցության մշտապես          գործող մարմին</p>	
7.	<p>ԼՂՀ Նախագահի թեկնածու ինքնաառաջադրվող քաղաքացու          գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը ԿԸՀ ներկայացվում          են.  <b>քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 90 և ոչ ուշ, քան 75 օր առաջ          մինչև ժամը 18.00-ն</b></p>	<p>ԸՕ հոդվ. 71, կետ          2, ԸՕ հոդվ. 88,          մաս 1</p>	<p>2012 թ ապրիլի 20-          ից մինչև 2012թ.          մայիսի 5-ը` ժամը          18.00-ն</p>	<p>Թեկնածու կամ նրա          լիազոր ներկայացուցիչ</p>	
8.	<p>Հանրապետության Նախագահի թեկնածուի կամ իր լիազոր          ներկայացուցչի անվամբ ԼՂՀ-ում գրանցված որևէ բանկում          նախընտրական հիմնադրամ ստեղծվում է.  <b>Հանրապետության Նախագահի թեկնածուի առաջադրման փաստը          հավաստող տեղեկանքը ստանալու օրվանից</b></p>	<p>ԸՕ հոդվ. 26, մաս          1, ԸՕ հոդվ. 78,          մաս 1</p>	<p>2012թ ապրիլի 20 -          ից</p>	<p>Թեկնածու, լիազոր          ներկայացուցիչ</p>	
9.	<p>Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրված քաղաքացու          գրանցումը որպես Հանրապետության Նախագահի թեկնածու          կատարվում է.  <b>ընտրության օրվանից ոչ շուտ, քան 50 և ոչ ուշ, քան 30 օր առաջ` մինչև          ժամը 18.00-ն</b></p>	<p>ԸՕ հոդվ. 88,          մաս 2          ԸՕ հոդվ. 71,          մաս 2</p>	<p>2012թ. մայիսի 30-          ից մինչև 2012թ.          հունիսի 19-ը`          մինչև ժամը 18.00-ն</p>	<p>Կենտրոնական          ընտրական հանձնաժողով</p>	
10.	<p>Հանրապետության Նախագահի թեկնածուների նախընտրական          քարոզչությունն իրականացվում է.  <b>թեկնածուների գրանցման համար նախատեսված վերջին օրվան          հաջորդող օրը և ավարտվում է քվեարկությունից մեկ օր առաջ</b></p>	<p>ԸՕ հոդվ. 19 ,          մաս 5</p>	<p>2012թ հունիսի 20-          ից մինչև 2012թ.          հուլիսի 17-ի ժամը          24.00-ն</p>	<p>ԼՂՀ քաղաքացիներ,          կուսակցություններ          (կուսակցությունների          դաշինք),</p>	
11.	<p>Այն բանկերը, որտեղ բացված են ժամանակավոր հատուկ          հաշվեհամարներ, համապատասխան ընտրական հանձնաժողով          տեղեկանք են ներկայացնում թեկնածուների նախընտրական          հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ  <b>Ենօրյա պարբերականությամբ</b></p>	<p>ԸՕ հոդված 26,          մաս 6</p>	<p>Ենօրյա          պարբերականու-          թյամբ</p>	<p>ԼՂՀ տարածքում գործող          բանկերի ղեկավարներ,          ՏարԸՀ նախագահներ</p>	
12.	<p>Թեկնածուները ԿԸՀ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը          ներկայացնում են հայտարարագիր` իրենց նախընտրական          հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման          վերաբերյալ  <b>նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո` 10-րդ օրը, ինչպես          նաև ոչ ուշ, քան ընտրությունների ավարտից 6 օր հետո</b></p>	<p>հոդված 26,          մաս 11</p>	<p>2012թ. հունիսի 29-          ին,          մինչև 2012թ.          հուլիսի 25-ը</p>	<p>Թեկնածուներ, ԿԸՀ ՎՎԾ</p>	

13.	Քարոզչական պաստառներ փակցնելու համար համայնքի տարածքում հատուկ տեղեր առանձնացվում են. <b><i>ոչ ուշ, քան նախընտրական քարոզչությունն սկսվելուց 5 օր հետո</i></b>	ԸՕ հոդվ. 22, մաս 2	մինչև 2012 թ. հունիսի 25-ը	Համայնքի ղեկավար	
14.	Թեկնածուներին գրանցելուց հետո, ըստ ներկայացված ցուցակների, վստահված անձանց տրվում են տեղամասերի թվի եռապատիկից ոչ ավելի կնքված վկայականներ. <b><i>թեկնածուի կամ նրա լիազոր ներկայացուցչի հայտը ներկայացնելուց հետո 5-օրյա ժամկետում</i></b>	ԸՕ հոդվ. 28, մաս 2, ԸՕ հոդվ. 42, կետ 1, ենթակետ 16	սկսած 2012 թ. հունիսի 10-ից	Կենտրոնական ընտրական հանձնաժողով	
15.	Ընտրական տեղամասերը կազմավորվում են. <b><i>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ</i></b>	ԸՕ հոդվ. 15, մաս 2	մինչև 2012թ. հունիսի 4-ը	Լիազոր մարմին՝ համայնքի ղեկավարի, տարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցչի մասնակցությամբ	
16.	Տեղամասային կենտրոնները կազմավորվում են. <b><i>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ</i></b>	ԸՕ հոդվ. 17, մաս 1	մինչև 2012թ. հունիսի 4-ը	Համայնքի ղեկավար	
17.	Զինվորական մասերում հաշվառված ընտրողների թիվը համապատասխան համայնքի և լիազոր մարմնի կամ նրա տարածքային ստորաբաժանման ղեկավարին ու տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում է. <b><i>քվեարկության օրվանից առնվազն 45 օր առաջ</i></b>	ԸՕ հոդվ. 10, մաս 9, ԸՕ հոդվ. 15, մաս 3.	մինչև 2012թ. հունիսի 4-ը	Զինվորական մասի ղեկավար	
18.	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում ընտրական տեղամասեր և տեղամասային կենտրոններ կազմավորվում են. <b><i>քվեարկության օրվանից առնվազն 45 օր առաջ</i></b>	ԸՕ հոդվ. 15, մաս 4, ԸՕ հոդվ. 16, մաս 3 ԿԸՀ 27.09.06թ. թիվ 19/ 50 որոշում	մինչև 2012թ. հունիսի 4-ը	ԼՂՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության ղեկավար	
19.	Ընտրական տեղամասերը տարածքային հանձնաժողովի որոշմամբ հաստատվում, համարակալվում, տեղամասային կենտրոնները նշվում, այդ տվյալները տեղական զանգվածային լրատվամիջոցներով հրապարակվում և կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվում. <b><i>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ</i></b>	ԸՕ հոդվ. 43, մաս 1, կետ 4	Հաստատելուց հետո երկօրյա ժամկետում	Տարածքային ընտրական հանձնաժողով	
20.	Տեղամասային կենտրոնի կազմավորման մասին քաղաքացիները և տեղամասային կենտրոնի տարածքը տնօրինող հաստատության ղեկավարը համայնքի ղեկավարի կողմից՝ հայտարարությունների միջոցով տեղեկացվում են. <b><i>տեղամասային կենտրոնի կազմավորումից հետո՝ երկօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 43 օր առաջ</i></b>	ԸՕ հոդվ. 17, մաս 3, ԿԸՀ 16.03.05թ. թիվ 5/51 որոշում	մինչև 2012թ. հունիսի 6-ը	Համայնքի ղեկավար	

21.	<p>Լեոնային Ղարաբաղի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում ընտրողների ցուցակները կազմվում են.</p> <p><b><u>ընտրությունը նշանակվելուց հետո՝ մինչև քվեարկության ավարտը</u></b></p>	ԸՕ հոդվ. 9, մաս 5	մինչև 2012թ. հունիսի 19-ը՝ ժ. 20.00	ԼՂՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության ղեկավար	
22.	<p>Ընտրողների ցուցակները տեղամասային կենտրոնների տարածքները տնօրինող հաստատությունների ղեկավարներին տրամադրվում և տեղամասային կենտրոնում փակցվում են.</p> <p><b><u>քվեարկության օրվանից առնվազն 40 օր առաջ</u></b></p>	ԸՕ հոդվ. 12, մաս 1	մինչև 2012թ. հունիսի 9-ը	Լիազոր մարմին	
23.	<p>Տեղամասային կենտրոնում փակցվում է տեղեկանք ընտրացուցակներում անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, տեղի, քննարկման կարգի, ժամանակի և պայմանների մասին.</p> <p><b><u>քվեարկությունից 40 օր առաջ</u></b></p>	ԸՕ հոդվ. 13, մաս 5	2012թ. հունիսի 9-ին	Լիազոր մարմին	
24.	<p>ԼՂՀ ընտրողների ռեգիստրը՝ ըստ ընտրական տեղամասերի ԿԸՀ ինտերնետային կայքում տեղադրելու համար՝ էլեկտրոնային տարբերակով, կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.</p> <p><b><u>քվեարկության օրվանից առնվազն 41 օր առաջ</u></b></p>	ԸՕ հոդվ. 9, մաս 6	մինչև 2012թ. հունիսի 8-ը	Լիազոր մարմին	
25.	<p>ԼՂՀ ընտրողների ռեգիստրը՝ ըստ ընտրական տեղամասերի, կենտրոնական ընտրական հանձնաժողովի ինտերնետային կայքում տեղադրվում է.</p> <p><b><u>քվեարկության օրվանից առնվազն 40 օր առաջ</u></b></p>	ԸՕ հոդվ. 9, մաս 6	մինչև 2012թ. հունիսի 9-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով	
26.	<p>Ընտրողների ցուցակները՝ էլեկտրոնային կրիչով համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին տրամադրվում են.</p> <p><b><u>քվեարկության օրվանից 40 օր առաջ</u></b></p>	ԸՕ հոդվ. 12, մաս 3	2012թ. հունիսի 9-ին	Լիազոր մարմին	
27.	<p>Լեոնային Ղարաբաղի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության ղեկավարի կողմից ընտրողների ցուցակները փակցվում են.</p> <p><b><u>քվեարկությունից 40 օր առաջ, իսկ վերջնական ցուցակը՝ 2 օր առաջ</u></b></p>	ԸՕ հոդվ. 9, մաս 5, ԸՕ հոդվ. 13, մաս 4, ԿԸՀ 27.09.06թ. թիվ 19/50 որոշում	2012թ. հունիսի 9-ին, 2012թ. հունիսի 17-ին	ԼՂՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության ղեկավար	
28.	<p>Հանրապետության Նախագահի թեկնածուների կենսագրական տվյալները հրապարակվում են.</p>	ԸՕ հոդվ. 42, մաս 1, կետ 18	2012թ. հունիսի 20-ից մինչև 2012թ. հունիսի 17-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով	

	<b>նախընտրական քարոզչության ժամանակ</b>				
29.	Քաղաքացիների կողմից ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու, քաղաքացու կողմից ընտրողների ցուցակում ընդգրկվելու կամ ընտրողների ցուցակից դուրս գալու մասին դիմում ներկայացվում է. <b>համայնքի ղեկավարին՝ քվեարկության օրվանից մինչև 7 օր առաջ. ոստիկանության բաժին՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան մինչև 5 օր առաջ</b>	ԸՕ հոդվ. 14, մաս 1	մինչև 2012թ. հուլիսի 12-ը  մինչև 2012թ. հուլիսի 14-ը	Համայնքի ղեկավար, լիազոր մարմին	
30.	Տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմավորվում են. <b>քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 26 և ոչ ուշ, քան 23 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն</b>	ԸՕ հոդվ. 38, մաս 2	2012թ. հունիսի 23-ից մինչև 2012թ. հունիսի 26-ը՝ ժամը 18:00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով, ԼՂՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության ղեկավար	
31.	Տեղամասային ընտրական հանձնաժողովների առաջին նիստերն անցկացվում են. <b>հանձնաժողովի կազմավորման հաջորդ օրը՝ ժամը 12:00-ին</b>	ԸՕ հոդվ. 38, մաս 4	2012թ. հունիսի 24-ից մինչև 2012թ. հունիսի 27-ը, ժ. 12:00-ին	Տարածքային ընտրական հանձնաժողով, ԼՂՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության ղեկավար	
32.	Կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատություններում ընտրական տեղամասեր և տեղամասային կենտրոններ կազմավորվում են. <b>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ</b>	ԸՕ հոդվ. 15, մաս 4, ԿԸՀ 16.03.05թ. թիվ 5/54 որոշում	մինչև 2012թ. հուլիսի 9-ը	Կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատության ղեկավար	
33.	Զինվորական մասերում կազմվող ընտրողների ցուցակները գործառնաբերում փակցվում են. <b>քվեարկության օրվանից 10 օր առաջ</b>	ԸՕ հոդվ. 13, մաս 7	2012թ. հուլիսի 9-ին	Զինվորական մասի ղեկավար	
34.	Հանրապետության Նախագահի թեկնածուն իրավունք ունի հանել իր թեկնածությունը. <b>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ</b>	ԸՕ հոդվ. 77, մաս 4	մինչև 2012թ. հուլիսի 9-ը	Թեկնածուներ	
35.	Ընտրողների թվի վերաբերյալ (ըստ ընտրական տեղամասերի) կենտրոնական ընտրական հանձնաժողովին տեղեկանքները տրամադրվում են. <b>Քվեարկության օրվանից 10 օր և 3 օր առաջ</b>	հոդված 12, մաս 1 <sup>1</sup>	2012թ. հուլիսի 9-ին 2012թ. հուլիսի 16-ին	Լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավար	

36.	Քվեաթերթիկները թողարկվում են. <b><i>քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 9-ը և ոչ ուշ, քան 3 օր առաջ</i></b>	Ը.Օ.հոդվ. 50 <sup>1</sup> , մաս 7	2012թ հուլիսի 10-ից մինչև 2012թ.հուլիսի 16-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով, ԼՂՀ դիվանագիտական կամ հյուպատոսական հիմնարկի ղեկավար	
37.	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններ կամ հյուպատոսական հիմնարկներ ընտրության քվեաթերթիկների, այլ փաստաթղթերի նմուշներն ուղարկվում են. <b><i>քվեարկությունից 7 օր առաջ</i></b>	Ը.Օ.հոդվ. 52	մինչև 2012թ.հուլիսի 12-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով	
38.	Կալանավորվածներին պահելու վայրերում տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմավորվում են. <b><i>քվեարկության օրվանից 5 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն</i></b>	ԸՕ հոդվ. 53, մաս 2, ԿԸՀ 16.03.05թ. թիվ 5/54 որոշում	2012թ. հուլիսի 14-ին մինչև ժամը 18.00-ն	Կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատության ղեկավար	
39.	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները տարածքային ընտրական հանձնաժողովին հանձնվում են. <b><i>քվեարկությունից ոչ շուտ, քան 5 և ոչ ուշ, քան 3 օր առաջ</i></b>	ԸՕհոդվ. 50 <sup>2</sup> , մաս 4	2012թ. հուլիսի 14-ից մինչև 2012թ. հուլիսի 16-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով	
40.	Թեկնածուների և կուսակցությունների վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքների հրապարակումն արգելվում է. <b><i>քվեարկության օրվան նախորդող 7 օրվա ընթացքում՝ ներառյալ քվեարկության օրը՝ մինչև ժամը 20.00-ն</i></b>	ԸՕ հոդվ. 23, մաս 2	2012թ.հուլիսի 12-ից մինչև 2012թ. հուլիսի 19-ը՝ ժամը 20.00-ն	ԶԼՄ-ներ, քաղաքացիներ, կազմակերպություններ	
41.	Կալանքի տակ գտնվող ընտրողների ցուցակները կազմվում են. <b><i>քվեարկությունից 3 օր առաջ</i></b>	ԸՕ հոդվ. 10, մաս 11 ԿԸՀ 16.03.05թ. թիվ 5/54 որոշում	2012թ. հուլիսի 16-ին	Կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատության ղեկավարը՝ տարածքային ընտրական հանձնաժողովի անդամի մասնակցությամբ	
42.	Քվեարկության օրը ընտրական տեղամասեր գործուղման մեջ գտնվող ոստիկանության ծառայողների ցուցակը ԼՂՀ ոստիկանությունը լիազոր մարմնի կամ նրա համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարին ներկայացնում է . <b><i>քվեարկության օրվանից առնվազն 3 օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն</i></b>	ԸՕ հոդվ. 10, մաս 3	մինչև 2012թ. հուլիսի 16-ը՝ ժամը 14.00-ն	ԼՂՀ ոստիկանություն	
43.	Մտացիոնար բուժման մեջ գտնվող քվեարկությանը մասնակցել ցանկացող ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակը՝ լիազոր մարմնի կամ նրա տարածքային ստորաբաժանման ղեկավարին ներկայացվում է. <b><i>քվեարկության օրվանից առնվազն 3 օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն</i></b>	ԸՕ հոդվ. 47	մինչև 2012թ.հուլիսի 16-ը՝ ժամը 14.00-ն	Մտացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատության ղեկավար	

44.	Զինվորական մասերում կազմված ընտրողների ցուցակները զմռսված ծրարով համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին տրամադրվում են. <b><i>քվեարկության օրվանից 3 օր առաջ</i></b>	ԸՕ հոդվ. 12, մաս 4	2012թ. հուլիսի 16-ին	Զինվորական մասի ղեկավար	
45.	Ընտրողների վերջնական ցուցակները՝ ըստ տեղամասերի և տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ տպագրված 2 օրինակից (ընտրողների ցուցակների 1-ին օրինակը՝ կազմված մատյանի ձևով, 2-րդ օրինակը՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար), ինչպես նաև ընտրող-ների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տրամադրվում են. <b><i>քվեարկության օրվանից 2 օր առաջ</i></b>	ԸՕ.հոդվ. 12, մաս 2	2012թ. հուլիսի 17-ին	Լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավար	
46.	Ընտրողների վերջնական ցուցակի օրինակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է. <b><i>քվեարկության օրվանից 2 օր առաջ</i></b>	ԸՕհոդվ. 13, մաս 6	2012թ. հուլիսի 17-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ	
47.	Ընտրողների ցուցակը կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատություններում կազմավորվող տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին հանձնվում է. <b><i>քվեարկության օրվանից 2 օր առաջ</i></b>	ԸՕ հոդվ. 12, մաս 5	2012թ. հուլիսի 17-ին	Կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատության ղեկավար	
48.	Ընտրողների վերջնական ցուցակները՝ էլեկտրոնային կրիչով համապատասխան տարածքային հանձնաժողովի նախագահին տրամադրվում են. <b><i>քվեարկության օրվանից առնվազն 2 օր առաջ</i></b>	ԸՕ հոդվ. 12, մաս 3	մինչև 2012թ. հուլիսի 17-ը	Լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավար	
49.	Քվեարկության սենյակը կահավորվում է. <b><i>քվեարկությունն սկսվելուց առնվազն 24 ժամ առաջ</i></b>	ԸՕ հոդվ. 16, մաս 2, ԸՕ հոդվ. 48, մաս 3	մինչև 2012թ. հուլիսի 18-ի ժամը 08:00-ն	Համայնքի ղեկավար, տեղամասային ընտրական հանձնաժողով	
50.	ԼՂՀ ընտրողների գրանցամատյանում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը հրապարակվում է. <b><i>քվեարկության նախորդ օրը</i></b>	ԸՕ հոդվ. 7, մաս 4	2012թ. հուլիսի 18-ին	Լիազոր մարմին	
51.	Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին քվեաթերթիկները և կնիքների փաթեթները հանձնվում են. <b><i>քվեարկության նախորդ օրը</i></b>	ԸՕ հոդվ. 50 <sup>1</sup> , մաս 8 ԸՕ հոդվ. 50 <sup>2</sup> , մաս 5	2012թ. հուլիսի 18-ին	Տարածքային ընտրական հանձնաժողով	

52.	Տեղամասային ընտրական հանձնաժողովին հանձնված բոլոր քվեաթերթիկները ստորագրվում են. <b>քվեարկության նախորդ օրը մինչև ժամը 24:00-ն</b>	ԸՕ հոդվ. 54, մաս 1	2012թ. հուլիսի 18-ին մինչև ժամը 24:00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողով	
53.	Քվեարկության օրը տեղամասային կենտրոնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը սկսվում և վիճակահանությունն անցկացվում է. <b>քվեարկության օրը՝ ժամը 07:00-ին</b>	ԸՕ հոդվ. 54, մաս 2	2012թ. հուլիսի 19-ին ժամը 07:00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողով	
54.	<b>Ք վ ե ա ր կ ու թ յ ու ն ը</b> <b>քվեարկության օրը՝ ժամը 8.00-ից մինչև 20.00-ն</b>	ԸՕ հոդվ. 47	2012թ. հուլիսի 19-ին ժամը 08:00-ից մինչև 20:00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողով	
55.	Տեղամասային ընտրական հանձնաժողովը 3-ժամյա պարբերականությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին տվյալներ է հաղորդում տարածքային ընտրական հանձնաժողովին, վերջինս՝ ԿԸՀ-ին, իսկ ԿԸՀ-ն հանրապետության բնակչությանը. <b>քվեարկության օրը</b>	ԸՕ հոդվ. 7, մաս 6	2012թ. հուլիսի 19-ի ժամը 12.00-ից մինչև 21.00-ն	Տեղամասային, տարածքային և կենտրոնական ընտրական հանձնաժողովներ	
56.	Տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը հրապարակվում է. <b>ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո</b>	ԸՕ հոդվ. 62, մաս 6	2012թ. հուլիսի 20-ին մինչև ժամը 06:00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ	
57.	Փաթեթավորված ընտրական փաստաթղթերը, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների երկու օրինակը, գործավարության մատյանը, կնիքը և քվեատուփը տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են. <b>քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում</b>	ԸՕ հոդվ. 62, մաս 9	2012թ. հուլիսի 20-ին մինչև ժամը 08:00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար	
58.	Ընտրություններին մասնակցած ընտրողների թվի մասին ամփոփ տվյալները պաշտոնապես հրապարակվում են. <b>քվեարկության հաջորդ օրը՝ մինչև ժամը 10.00-ն</b>	ԸՕ հոդվ. 7, մաս 6, Ը.Օ.հոդվ. 7, մաս 8	2012թ. հուլիսի 20-ին՝ մինչև ժամը 10:00-ն	Կենտրոնական ընտրական հանձնաժողով	
59.	Տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների տվյալների աղյուսակավորումը և մուտքագրումը համակարգիչ ավարտվում է. <b>քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում</b>	ԸՕ հոդվ. 63, մաս 2	մինչև 2012թ. հուլիսի 20-ը՝ ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով	
60.	Վերահաշվարկի պահանջի մասին դիմումները տարածքային ընտրական հանձնաժողովում ընդունվում են.	ԸՕ հոդվ. 412, մաս 7	մինչև 2012թ. հուլիսի 20-ը՝ ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողով	



	<b><i>քվեարկության հաջորդ օրը՝ մինչև ժամը 14.00-ն</i></b>				
61.	Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ԼՂՀ Նախագահի ընտրության նախնական արդյունքներն ամփոփում, արձանագրությամբ վավերացնում ու հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով պաշտոնապես հրապարակում է.  <b><i>քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում</i></b>	ԸՕ հոդվ. 64, մաս 1	մինչև 2012թ. հուլիսի 20-ի ժամը 20:00-ն	Կենտրոնական ընտրական հանձնաժողով	
62.	Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ԼՂՀ Նախագահի ընտրության արդյունքները ամփոփում, արձանագրությամբ վավերացնում և հրապարակում է.  <b><i>քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 72 ժամվա ընթացքում (իսկ բողոք լինելու դեպքում՝ 7 օր հետո)</i></b>	ԸՕ հոդվ. 82, մաս 1, ԸՕ հոդվ. 64, մաս 3	մինչև 2012թ. հուլիսի 22-ի ժամը 20.00-ն (2012թ. հուլիսի 26-ի ժամը 20.00-ն)	Կենտրոնական ընտրական հանձնաժողով	
63.	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները կենտրոնական ընտրական հանձնաժողով վերադարձվում են.  <b><i>քվեարկության ավարտից 24 ժամ հետո</i></b>	ԸՕ հոդվ. 63, մաս 3	մինչև 2012թ. հուլիսի 20-ի ժամը 20.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ	
64.	Տարածքային ընտրական հանձնաժողովներում վերահաշվարկի աշխատանքներն իրականացվում են.  <b><i>քվեարկության օրվանից 2 օր հետո՝ ժամը 9.00-ից մինչև քվեարկության օրվանից 5 օր հետո՝ ժամը 14.00-ն</i></b>	ԸՕ հոդվ. 41 <sup>2</sup> , մաս եր 7, 12	2012թ. հուլիսի 21-ին, ժամը 09.00-ից մինչև 2012թ. հուլիսի 24-ը՝ ժամը 14.00-ն	Տարածքային ընտրական հանձնաժողովներ	
65.	Տեղամասային ընտրական հանձնաժողովը ֆինանսական միջոցների ծախսման վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում տարածքային ընտրական հանձնաժողով.  <b><i>ընտրությունների ավարտից հետո 10-օրյա ժամկետում</i></b>	ԸՕ հոդվ. 79, մաս 2	մինչև 2012թ. հուլիսի 29-ը	Տեղամասային ընտրական հանձնաժողով	
66.	Տարածքային ընտրական հանձնաժողովը ֆինանսական միջոցների ծախսման վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում ԿԸՀ.  <b><i>ընտրությունների ավարտից հետո 20-օրյա ժամկետում</i></b>	ԸՕ հոդվ. 79, մաս 2	մինչև 2012թ. օգոստոսի 8-ը	Տարածքային ընտրական հանձնաժողով	

67.	Թեկնածուները ԿԸՀ-ին ներկայացնում են հայտարարագիր իրենց հիմնադրամի միջոցներն օգտագործելու մասին. <i>ոչ ուշ, քան ընտրության ավարտից 6 օր հետո</i>	ԸՕ հոդվ. 26, մաս 4	մինչև 2012թ.հունիսի 25-ը	Թեկնածուներ	
68.	Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ֆինանսական միջոցների ծախսման մասին ԼՂՀ վերահսկիչ պալատ հաշվետվություն է ներկայացնում. <i>ընտրությունների ավարտից հետո՝ 60-օրյա ժամկետում</i>	ԸՕ հոդվ. 79, մաս 2	մինչև 2012թ. սեպտեմբերի 17-ը	ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով	

Ծանոթություն.

Ընտրական հանձնաժողովների աշխատաժամերն են՝ 9.00-ից մինչև 18.00-ն, հանգստյան օրերը՝ շաբաթ և կիրակի, եթե ԼՂՀ ընտրական օրենսգրքով և սույն ժամանակացույցով այլ բան նախատեսված չէ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կենտրոնական ընտրական հանձնաժողովի  
քարտուղար՝

Ռ. Նազարյան